Մոդուլ 3: Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը

Տևողությունը՝ 3 ժամ 30 րոպե
Բովանդակություն

1. **Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը**
2. **Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը**

Մոդուլի կառուցվածքը

Թեմա	Մեթոդ	Տևողություն
Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը	Պրեզենտացիա Ինտերակտիվ խաղեր	1 ժամ 1 ժամ 20 րոպե
Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործի ներկայացում	Քննարկում	30 րոպե
Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը	Պրեզենտացիա	40 րոպե

Դասախոսության նյութ

1. Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը

1.1. Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի հասկացությունը

Խոշտանգումը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առավել խիստ և դիտավորությամբ կատարվող ձևն է:

Խոշտանգում է համարվում ցանկացած գործողություն, որով անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ:

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկն է: Այդ արգելքը բացարձակ է: Ի տարբերություն մարդու և քաղաքացու որոշ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Դրա շրջանցումը չի կարող արդարացվել և հիմնավորվել պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության կամ հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն արգելվում է՝ անկախ զոհի վարքագծից:

Հարկ է նշել, որ խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև կան որոշակի տարբերություններ: Խոշտանգումը միայն այն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն է, որը կիրառվում է դիտավորությամբ և պատճառում է լուրջ և դաժան տառապանքներ: Խոշտանգմանը, բացի դրան բնորոշ դիտավորության և դաժանության հատկանիշից, հատուկ է նաև նպատակայնության տարրը: Ինչպես արդեն նշվեց, խոշտանգում է համարվում այն գործողությունը, որով դիտավորությամբ անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից տեղեկություններ կորզելու, պատժելու կամ վախեցնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել խոշտանգմանը վերագրվող հետևյալ հատկանիշները, որոնցով այն տարբերակվում է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից.

- Խոշտանգումը զոհին պատճառում է առավել ուժեղ ցավ և տառապանք:
- Խոշտանգումը դիտավորությամբ կատարվող գործողություն է:
- Խոշտանգումը հետապնդում է անձից որոշակի տեղեկություն կամ խոստովանություն կորզելու նպատակ:

Միաժամանակ հարկ է նշել, որ համանման գործողությունները մի դեպքում կարող են որակվել որպես «խոշտանգում», մյուս դեպքում՝ որպես «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք»: Սա նշանակում է, որ դրանց միջև սահմանը հստակ չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները:

Եթե խոշտանգումն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից տարբերակելու որոշակի չափանիշներն առկա են միջազգային իրավունքի նորմերում և Եվրոպական դատարանի վճիռներում[63], ապա անմարդկային

[63] Aksoy v. Turkey, Judgment of 18 December 1996.

կամ նվաստացնող վերաբերմունքի տարբերակման խնդիրն ավելի բարդ է: Շատ դեպքերում անմարդկային վերաբերմունքը նաև նվաստացնող վերաբերմունք է[64]: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով կիրառված հարցաքննության մեթոդները Եվրոպական դատարանը համարել է ոչ միայն անմարդկային, այլև նվաստացնող, քանի որ դրանց կիրառումը զոհերի մեջ առաջացնում էր վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող էր ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը[65]:

Չնայած անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի միջև հստակ տարբերության բացակայությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը և դատարանը փորձել են տալ դրանց սահմանումները և առանձնացնել դրանց տարբերակիչ հատկանիշները: Հանձնաժողովի սահմանման համաձայն՝ ««Անմարդկային վերաբերմունք» հասկացությունը ներառում է այնպիսի վերաբերմունք, որով դիտավորությամբ պատճառվում է ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը կամ պատիժը կարող է նվաստացնող համարվել, եթե այլոց առջև ստորացնում է անձին կամ նրան ստիպում է գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ»:

Ըստ դատարանի սահմանման՝ «Նվաստացնող կարող է համարվել այն վերաբերմունքը, որը զոհերի մեջ առաջացնում է վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող է ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը»[66]:

«Անմարդկային» և «նվաստացնող» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում, որոնցում այդ հասկացություններն իրենց հետագա զարգացումն են ապրել[67]:

Խոշտանգումների և արգելված վերաբերմունքի այլ ձևերի տարբերակումը հիմնականում կախված է պատճառված տառապանքի ծանրության տարբեր աստիճաններից:

Խոշտանգման դեպքում անհրաժեշտ է ապացուցել կոնկրետ նպատակի առկայությունը, իսկ վերաբերմունքի այլ ձևերի դեպքում նման պահանջ չկա: Անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կարող է առաջանալ գործողություններ չձեռնարկելու, ոչ թե դիտավորյալ կատարված գործողությունների հետևանքով:

---

[64] Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Հունական գործով 1969 թ. նոյեմբերի 5-ի զեկույց:

[65] Ireland v. the United Kingdom, Judgment of 18 January 1978.

[66] Քենանն ընդդեմ Միացյալ Թագավորության և Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով վճիռները:

[67] Kurt v. Turkey, Judgment of 25 May 1998, Cuprus v. Turkey, Judgment of 10 May 2001.

1.2. Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի գործի ներկայացում[68]

2000 թ. դեկտեմբերին դիմողը հետազոտվել է երկու բժշկական հանձնաժողովների կողմից և ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար: Ծառայության երկրորդ ամսից՝ 2001 թ. փետրվարից, տառապել է ծնկի ցավերից: Ծնկի վիճակի կապակցությամբ նրա անմիջական պետը նրան ազատել է ֆիզիկական վարժանքներից և շարային վարժություններից: Պարզվել է նաև, որ ծնկի վիճակից ելնելով՝ դիմողը մի քանի անգամ բուժում է ստացել զորամասի բուժկետում:

2001 թ. մարտին կրտսեր սերժանտ Չ-ն դիմողի անմիջական պետի ներկայությամբ հրամայել է դիմողին և այլ զինվորների՝ կատարել ծնկի 350 վարժություն՝ որպես պատիժ բարաքները չմաքրելու համար: Դիմողն ուժասպառ է եղել վարժության ընթացքում և տարվել հոսպիտալ՝ շտապ բուժօգնություն ստանալու նպատակով: Զինծառայողը տեղափոխվել է քաղաքացիական հիվանդանոց, որտեղ ստացել է բուժում, ինչից հետո ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, զորացրվել՝ ճանաչվելով երկրորդ կարգի հաշմանդամ:

Սույն գործով դատարանը փաստել է, որ կոնվենցիայի 3-րդ հոդվածը խստիվ պահպանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմաններում վատ վերաբերմունքը պետք է ունենա լրջության նվազագույն մակարդակ: Այդ նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, որոշ դեպքերում՝ զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը:

Կիրառված խոշտանգումն ու անմարդկային վերաբերմունքը ցանկացած դեպքում պետք է դուրս գան օրինական վերաբերմունքի կամ պատժի հետ կապված տառապանքի և նվաստացման անխուսափելի տարրերի սահմաններից: Պարտադիր զինվորական ծառայությունը հաճախ ներառում է այնպիսի տարր, ինչպիսին է անձին ազատությունից զրկելու միջոցը: Այդուհանդերձ, շատ գործողություններ, որոնք կարող են առաջացնել բանտարկյալների նկատմամբ նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք, չեն կարող անցնել վատ վերաբերմունքի սահմանը, երբ դրանք իրականացվում են զինված ուժերում՝ պայմանով, որ դրանք կատարեն հատուկ առա-

[68] Chember v. Russia, no. 7188/03, ECHR 2008.

քելություն զինված ուժերում, երբ, օրինակ, դրանք հանդիսանում են կռվի դաշտի համար սահմանված վարժանքների մի մասը:

Այդուհանդերձ, պետությունը պարտավոր է ապահովել, որ անձը զինվորական ծառայություն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պահպանված են՝ տրամադրելով նրան համապատասխան բժշկական օգնություն: Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլև մարդկային տարրի պատճառով, երբ պետությունը քաղաքացիներին զորակոչում է զինվորական ծառայության:

Համաձայն դատարանի մոտեցման՝ վերաբերմունքը համարվում է «անմարդկային», եթե այն կանխամտածված է, կատարվում է ժամկետով և պատճառում է կա՛մ փաստացի մարմնական վնասվածքներ, կա՛մ ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Այն հարցը, թե արդյոք վերաբերմունքի նպատակը եղել է անձին տառապանք պատճառելը, հաշվի է առնվում հետագայում, սակայն նման որևէ նպատակի բացակայությունն արդյունքում չի կարող բացառել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը:

Այսպես՝ հիշյալ սկզբունքները կոնկրետացնելով գործի փաստերին՝ դատարանը որոշում է, որ դիմողին հրամայված է եղել կատարել հատուկ հանձնարարություն՝ կքանիստ վարժություններ՝ որպես պատիժ բարքները ոչ պատշաճ մաքրելու համար: Այդ հրամանը տրվել է նրա ժամանակավոր հրամանատարի կողմից, սակայն դրան լռելյայն համաձայնել է վերադաս հրամանատարը, ով ներկա է եղել և չի առարկել հրամանին: Հետևաբար, այդ վերաբերմունքը դիմողի նկատմամբ իրականացվել է դիտավորությամբ: Դիմողն ուժասպառ է եղել և չի կարողացել կառավարել ոտքերը: Չնայած որ նա և՛ զինվորական, և՛ քաղաքացիական հիվանդանոցում ստացել է բժշկական օգնություն, հասցված վնասվածքը հանգեցրել է առողջության երկարատև քայքայման: Դիմողն ազատվել է զինվորական ծառայությունից և դարձել է երկրորդ կարգի հաշմանդամ:

Դատարանը որոշել է, որ տվյալ գործով դիմողը ենթարկվել է ֆիզիկական վարժությունների հարկադիր կատարման, որոնք նրան հասցրել են ֆիզիկական ուժասպառության: Այս պատիժն իրականացվել է դիտավորու-

թյամբ դիմողի հրամանատարների կողմից, որոնք հստակ իմացել են նրա առողջական խնդիրների մասին, ինչպես նաև այն իրականացվել է առանց որևէ ծառայողական անհրաժեշտության, որը կարդարացներ այդ գործողությունները: Այսինքն՝ նման հանգամանքներում այդ պատիժը դիմողին պատճառել է ֆիզիկական մեծ տառապանք և անցել լրջության նվազագույն աստիճանի սահմանները:

Հետևաբար, դիմողը ենթարկվել է անմարդկային պատժի՝ հանգեցնելով կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

1.3. Ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիություն

Գործողությունը որպես «խոշտանգում կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» դիտելու համար բավարար է, որ այդ վերաբերմունքը ունենա խստության նվազագույն աստիճան: Այս սկզբունքային մոտեցումը պայմանավորված է նրանով, որ խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդուն ներհատուկ կարևորագույն արժեքներից մեկն է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Ահաբեկչության և հանցավորության դեմ պայքարն անգամ չի կարող հիմք համարվել անձի ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության դեմ ոտնձգելու համար: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության[69] գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իռլանդացի կասկածյալներին հարցաքննելու մի շարք մեթոդներ, ինչպիսիք են անընդհատ աղմուկի մեջ պահելը, քնից զրկելը, ուտելիքից և ջրից զրկելը, դիտել է որպես անմարդկային և նվաստացնող վերաբերմունք:

Վերաբերմունքի խստության նվազագույն աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբեր է, քանի որ կախված է բազմաթիվ հանգամանքներից, ներառյալ՝ նման վերաբերմունքի կիրառման տևողությունից: Այսպես՝ Ակսոյն ընդդեմ Թուրքիայի[70] գործով տուժողը ենթարկվել է այսպես կոչված «Պաղեստինյան կախաղանի»՝ նրան մերկացրել են, ձեռքերը միասին կապել հետևում և կապված ձեռքերից կախել, որի հետևանքով անձը պարալիզվել է: Սա դատարանը դիտել է որպես խոշտանգման արգելքի խախտում: Դեպքը տեղի է ունեցել ազատությունից զրկելու վայրում:

Ազատազրկման վայրի պայմանները նույնպես կարող են բերել արգելքի խախտման: Այդպիսի պայմաններ կարող են համարվել ջեռուցման, օդափոխության, լուսավորության, սննդի և ջրի, բժշկական սպասարկման, գերբնա-

[69] Ireland v. the United Kingdom, 18 January 1978 Series A no. 25.
[70] No. 21987/93, 18.12.1996, 1997 23 EHRR.

կեցման և այլ հանգամանքները: Այսպես՝ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի[71] գործով տուժողը պահվել է 8 անձի համար նախատեսված 17-21 քմ տարածք ունեցող խցում՝ 18-24 այլ ազատազրկված անձանց հետ միասին: Այդ անձինք հարկադրված են եղել քնել հերթով: Խցի լուսավորությունն անընդհատ միացված է եղել, ինչն անքնություն է պատճառել, օդափոխությունը բավարար չի եղել, զուգարանը առանձնացված չի եղել խցի բնակելի մասից: Տուժողը պահվել է սիֆիլիսով, տուբերկուլյոզով, այլ վարակիչ հիվանդություններով տառապող անձանց հետ, ինչի հետևանքով ինքն էլ է վարակվել տարբեր հիվանդություններով: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը համարել է, որ նման նվաստացնող պայմանները տուժողին մտավոր տառապանքներ են պատճառել՝ ստորացնելով նրա մարդկային արժանապատվությունը:

Պետությունը նաև խոշտանգումները, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը կանխելու, իսկ կատարման դեպքերում՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու, մեղավորներին հայտնաբերելու և պատժելու միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն ունի: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է արդյունավետ լինեն և ծառայեն իրենց նպատակին:

Ամրագրումը միջազգային և ներպետական նորմերում

Խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքը միջազգային իրավունքի հիմնարար և հանրաճանաչ նորմ է, որն անվերապահորեն ընդունելի է բոլոր պետությունների կողմից և այդ արգելքից որևէ վերապահում երբևէ անթույլատրելի է: Խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի արգելքը իր արտացոլումն է գտել ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավունքում:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

Խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1975 թ. դեկտեմբերի 9-ի հռչակագրի համաձայն՝ «Խոշտանգումը դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի առավել խիստ և դիտավորությամբ կատարվող ձևն է»:

---

[71] No. 27095/95, 15.07.02, 2003 36 EHRR 34.

Միավորված ազգերի կազմակերպության՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թ. դեկտեմբերի 10-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «խոշտանգում» է համարվում «ցանկացած գործողություն, որով անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ»:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Զերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի»:

Ինտերակտիվ խաղեր

Խաղային ուսուցումը իրականացվում է գործի ուսումնասիրության միջոցով: Լսարանը բաժանվում է զույգ թվով խմբերի՝ առավելագույնը հինգ մասնակից կազմով: Յուրաքանչյուր խմբի տրվում է ստորև ներկայացված փաստերից մեկը: Խմբերից յուրաքանչյուրը պետք է հիմնավորի կա՛մ «խոշտանգումը», կա՛մ «անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը»:

Խմբերին տրվում է 45 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար:

Դասախոսը կարող է հարցեր ուղղել ներկայացնողներին:

Կողմերի դիրքորոշումները լսելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի իրական գնահատականը և դրա հիմնավորումները:

Փաստերի առաջին խումբը

Զերբակալված անձը մի քանի օրերի ընթացքում բազմիցս ծեծի է ենթարկվել խոստովանություն կորզելու և տեղեկություններ ստանալու նպա-

տակով: Ծեծի մանրամասները և տևողությունը ներկայացնել ըստ Ալ Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության գործի[72]:

Պատասխան՝ Խոշտանգում, քանի որ տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու նպատակ է հետապնդվել:

Փաստերի երկրորդ խումբը

Ոստիկանության սպան ծեծի է ենթարկել տուժողին: Ծեծի մանրամասները և տևողությունը ներկայացնել ըստ Էգմեզն ընդդեմ Կիպրոսի[73]:

Պատասխան՝ անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, քանի որ տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու նպատակ չի եղել:

2. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը. ստրկության և հարկադիր աշխատանքի հասկացությունը

Ստրկությունը բացարձակապես արգելված է: Այս կանոնը միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմ է, որի նկատմամբ որևէ վերապահում կամ բացառություն թույլատրելի չէ: Ստրկությունն այնպիսի վիճակ է, որի դեպքում մարդը անազատ է. նա ոչ թե իրավունքի սուբյեկտ է, այլ օբյեկտ: Իրավունքի օբյեկտ լինելը նշանակում է, որ մեկ այլ անձն է ստրուկի նկատմամբ իրավունքների կրողը և կարող է տնօրինել, օգտագործել ստրուկին, նրա աշխատանքը: Մինչդեռ մարդկային արժանապատվությունը, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը, պահանջում է, որ մարդը լինի ազատ և լինի իրավունքների կրող ու իրագործող:

Ստրկությունը չթույլատրելու հարցում պետությունն իր իրավասության սահմաններում պոզիտիվ պարտականություն ունի, ինչը նշանակում է, որ նա չպետք է թույլ տա, որ մարդիկ հայտնվեն ստրկության վիճակում, իսկ ստրկության մեջ հայտնվելու պարագայում կատարի արդյունավետ հետաքննություն, բացահայտի նպատժի մեղավորներին:

2.1. Եթե ստրկության արգելքից որևէ բացառություն չի կարող լինել, ապա հարկադիր աշխատանքի արգելքը բացարձակ չէ և կարելի է շեղումներ թույլ տալ

Հարկադիր աշխատանքն այն է, երբ անձը հարկադրված է ապրել մեկ այլ անձի սեփականության տարածքում և պարտավոր է աշխատանք կատարել նրա համար: Սիլիադինն ընդդեմ Ֆրանսիայի[74] գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարան էր դիմել Տոգոյի քաղաքացի, ով 16 տարեկա-

[72] Al-Adsani v. the United Kingdom [GC], no. 35763/97, ECHR 2001-XI.

[73] Egmez v. Cyprus, no. 30873/96, ECHR 2000-XII.

[74] No. 73316/01; European Court Information Note No 62, March 2004.

նում եկել է Ֆրանսիա, որտեղ նրան ստիպել են կատարել տարբեր աշխատանքներ: Նրան ստիպել են կատարել տնային աշխատանքներ, խնամել երեխաներին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 10-ը: Եվ այդ ամենի համար նրան չեն վճարել: Նա չի ունեցել ոչ աշխատանքի թույլտվություն, ոչ բնակության իրավունք և ոչ էլ անձնագիր: Այս գործը մտել է դատարան հարկադիր աշխատանքի արգելքի հիմքով:

Հարկադիր է այն աշխատանքը, որն անձը կատարում է իր կամքին հակառակ:

2.2. Հարկադիր աշխատանքի և պարտադիր զինվորական ծառայության տարբերությունը

Միջազգային և ներպետական իրավական ակտերով բացառություններ են սահմանվում հարկադիր աշխատանքի արգելքից: Այդպիսի բացառություն է զինվորական ծառայությունը, որի պարագայում ծառայության հետ կապված աշխատանքն անձի համար կարող է լինել ոչ կամավոր, չվճարվող, սակայն չհամարվի հարկադիր աշխատանք: Բայց այդ աշխատանքը պետք է բացառապես կապված լինի զինվորական ծառայության հետ, որն ունի հանրային նշանակություն: Օրինակ՝ որևէ հրամանատարի սեփական տան համար կամ նրա սեփական հողամասում ստորադաս զինծառայողի կողմից աշխատանքի կատարումը կարող է դիտվել որպես հարկադիր աշխատանք, քանի որ դա չունի հանրային նշանակություն, կատարվում է ի շահ մասնավոր անձի և զինվորական ծառայության պարտականության մաս չէ:

Զինվորական ծառայությունից զատ, հարկադիր աշխատանքի արգելքից որպես բացառություններ կարող են սահմանվել ազատազրկման վայրերում կատարվող աշխատանքի, ազատազրկումից պայմանական ազատվելու դեպքում պահանջվող աշխատանքի կատարումը, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն այլընտրանքային աշխատանքի կատարումը, արտակարգ իրավիճակներում կատարված աշխատանքը, ինչպես նաև այն աշխատանքը, որի կատարումը քաղաքացիական պարտականությունների կատարման մաս է կազմում:

Ամրագրումը միջազգային և ներպետական նորմերում

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատության վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը իրենց բոլոր տարատեսակներով արգելվում են»: Նույն Հռչակագրի 6-րդ հոդվածը սահմանում է, որ ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունք ունի:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների վերաբերյալ դաշնագրի 8-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը և ստրկավաճառությունը արգելվում են իրենց բոլոր ձևերով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. ա) Ոչ ոք չպետք է բռնադատվի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի:

բ) Այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքների հետ, կետ 3 (ա)-ն խոչընդոտ չի հանդիսանում տաժանակիր աշխատանքների նշանակած իրավասու դատարանի դատավճռով այդպիսի պատժի իրականացման համար:

գ) Սույն կետում «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» տերմինի մեջ չեն ընդգրկվում.

- iii) ա) ենթակետում հիշատակվող որևէ աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը.
- ռազմական բնույթի որևէ ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ ճանաչվում է քաղաքական ու կրոնական-էթնիկական շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ այդ շարժառիթներով զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված որևէ ծառայություն.
- որևէ ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին ու բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում.
- որևէ աշխատանք կամ ծառայություն, որը մտնում է սովորական քաղաքացիական պարտականությունների մեջ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

ա) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջում է կատարել սույն կոնվենցիայի հոդված 5-ի դրույթներին համաձայն կալանքի տակ

գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով, պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակվող ծառայությունը,

գ) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանը սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ) սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կան ծառայություն:

Հարկադիր աշխատանքը արգելվում է նաև ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով: